


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ

ՏՏՈՐԻՆ. ԱՐՇԱՆՈՅՍ ԸՐԱԳՐԻ
ԳԱԶԻՐԷ (ՓՈՍՏ ԱԿՐԱՑՈՒՄ)

E. TOROSSIAN
Direct. propr. du journal arménien
ARCHA LOUISE
LE CAIRE (Égypte)

Poste-restante



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՉԱՄՍՐ
Տարեկան, ողջ դասկիմ. 60
Վեցամսեայ » 35
ՕՏՈՐ ՊԵՐՍՈՒՆԵՐ
Տարեկան ճրամեմ. 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՂԱՔԻԿ Ե
ՆՈՒՂՂԱՍԱՐԻ ԾԱԽՔԸ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չեն տրուիր:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

Մ Կ Ր Տ Ի Չ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՔՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ
ՈՒՅԻՐ — 1893

Մկրտիչ ծառայ Յիսուսի Բրիտանիայի և Անգլիաների կամքն Աստուծոյ Եպիսկոպոս- ձայնեալ և Կաթողիկոս ամենայն Հայոց ծա- յրագոյն Պատրիարք համագրական նախա- մեծար Աթուռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմի- ածնի. Արժանապատիւ նախագահի և Պատ- ուարժան Տիրոջ անդամոյ «Որբախնամ» Ըն- կերութեան Վասպուրականի» որ'ի Գահիրէ Եգիպտոս, հարազատ որդւոյ Մայր Աթա- ուոյս, նուիրեմք ողջոյն հանգերձ Հայրա- պետական օրհնութեամբ:

Գոհունակութեամբ հոգւոյ և մխի- թարութեամբ սրտի ընթերցաք յ'էջն Ազգա- յին թերթից, եթէ պատուական ազգա- յինքը մեր որ պանդխտեալք էք առ ափունս նեղուսի, 'ի Սէր թշուառացեալ որբոց հար- ուածեալ Հայրենեաց մերոց, կազմեալ կայք ընկերութիւն մի ընդ անուամբս «Վասպուրա- կանի որբոխնամ ընկերութիւն» նպատակ եղեալ սատարել նիւթապէս Պատ. Հոգա- բարձութեան վանուցն վարագայ պահել յ'որբանոցի սեղանն որբս, որոց խաղառ հատեալ է յոյս մխիթարութեան:

Որբա՛կք Հոգևորք, ճշմարտապէս բա- զու՛մ եղեն աղէտք և բազմաթիւ աղէտա- ւորք, որք այսօր հեծեն ի թշուառութեան կարօտաւորք այլոց նպաստից: Որ մեծա- տուն էր և ճո՛ւ՛ այսօր մուրացիկ է և աղ- քատ, որոյ բարեկից էր սեղանն և առատ հացն՝ այսօր զրկեալ յամենայնէ կարօտի փշրանաց. որ երջանիկ էր ամուսնովն և զա- ւակօք, որդւովք և թուամբ, այսօր անբազդ է և այրի, որք է և անտերուշ, զուրկ յ'ընտանեկան քաղցրութենէ, յ'ամուսնական սիրոյ, 'ի ծնողական զգուանաց և 'ի սփո- փանաց, եղեալ զյոյսն իւր առ բարեգործ և մարդասէր ազգայինս: Եւ օրհնեալ մար- դասէր սատարողք, ազգայինք մեր եւ օտա- րագրիք որք դրդուեալք 'ի Բրիտանեական սիրոյ յամենայն ուստեք նպաստեցին և նպաստեն առ ի թեթեալումն վշտաց հար- ուածելոյց զէթ զբեւապահին հասուցանելով նոցունց: Եւ Ձեզ՝ առաքինասէր անդամոցդ՝ միութեան Որբախնամիդ, որոյ ընդ կազմա-

կերպումն ուրախ եմք և մխիթարեալ: Մեք սովին Հայրապետական կեդրակաւ յայտնեմք զմերն շնորհակալիս հանգերձ Հայրական օրհնութեամբ, մաղթելով ի վերայ համայ- նիցդ և բարեպաշտ նուիրատուաց և նպաս- տողաց ընկերութեանդ զԱստուածային հզօր հովանին և զերկնային անըսպառ բարիս և շնորհս:

Օրհնեցէ՛ Տէր Աստուած զպատճառան և զկազմակերպողն միութեանդ և զանդամն Գործադիր ժողովոյդ, պարգևելով սէր, մի- ութիւն և ամենայն յաջողութիւն: Յորդո- րելով զամենեւեանսդ 'ի բարեգործութիւն և 'ի միութիւն առ ազգային գործս և օգուտս, մնամք վանս սիրեցեալ աղբիս և լտարան- դի և ցրուեալ որդւոց նորին հանապաղ աղօթարար:

ՄԿՐՏԻՉ ԿԱՔՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ
'ի 24 փետրուար 1900 ամի և ըստ տոմարիս ՌԵԻԹԻ Ի Հայրապետութեան Մե- ռում 8 ամի յ'Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ի Վաղարշապատ:
Թիւ 174

Ա Չ Գ

Չատկական տօներու պատճառաւ յա- ռաջիկայ Չորեքշաբթի ԱՐՇԱՆՈՅՍ Հ'պիտի հրատարակուի:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

Երկու տօներ կան որ բոլոր քրիստոնեայ աշ- խարհի կողմէ կը յարգուի առ հասարակ և որք կը յիշատակեն քրիստոնէութեան ամենէն հիմնա- կան և էական իրողութիւնները: Քրիստոսի Մը- նընդեան եւ Յարութեան տօներն են ասոնք:

Այս երկու տօներէն Յարութեան տօնը կամ Չատիկը կարեւորագոյնն է: Քրիստոսի ծնունդը թէ՛ և նոր թուական մը բացաւ. եւ համայն աշ- խարհի կացութիւնը յեղաշրջեց. սակայն կրօնա- կան տեսակետով Անոր Յարութիւնը բարձրագոյն գիւրք մը կը բռնէ: Քրիստոսի Յարութիւնն իրա- կանութեան վերածեց մինչև ցարդ աղօտ կեր- պով ըմբռնուած և միայն վերացական դաղա- փարս անմահութեան և Հանդերձեալին դոները մեր առջև բունալով Յաւիտենականութեան գաղտ- նիքները երևան հանեց: Իրաւունք ունին բոլոր յարանուանութեան պատկանող Աստուածաբան- ներն հետեւելով Պօղոս Առաքելայի վարդապետու- թեան՝ նկատել Քրիստոսի Յարութիւնն իր վէճ անկեան, որուն վրայ հաստատուած է քրիստո-

նէութեան ամբողջ շէնքը: Եւ արդարեւ վերցուր այս վաղապետութիւնը մեր կրօնքէն, բոլոր հաս- տատութիւնը յերկիր կը տապալի հիմ չունեցող սաճարի մը պէս:

Սակայն հոս ուշադրութեան արժանի կէտ մը կայ. թէ՛ և Յարութեան տօնը ընդունուած է իբր անհրաժեշտ մաս Քրիստոնէական կրօնին բոլոր եկեղեցիներու կողմէ, բայց Անոր կատարման մա- սին որ եւ է պատուէր չկայ նոր կտակարանին մէջ: Միայն մէկ համար Մեծ Առաքելային նամակներուն մէջ զատկական տօնախմբութեան ակնարկութիւն մը ըլլալ կը կարծուէր. «Քանզի Քրիստոս մեր զա- տիկը զոհուեցաւ մեզի համար. ուստի առեւ կատա- րենք՝ ոչ հին խմորով եւ ոչ շարութեան եւ անըզ- գամութեան խմորով, այլ անկեղծութեան եւ ճշմարտութեան անխմոր հացի»: Յովհան Ոսկե- բերան այս համարիս վրայ մեկնաբանելով կըսէ, «Ամբողջ ժամանակը քրիստոնէից համար տօնա- խմբութիւն մըն է անոնց տրուած բարի բաներուն գերազանցութեանը համար»: Նմանապէս Որդի- նէս կը պնդէ թէ անոնք որ Քրիստոսի ճշմարտու- թեանց վրայ կը մտածեն հանապաղ, արդէն կը պահեն զատկական տօնը յարատեւ: Այսպէս կը տեսնենք թէ՛ ոչ Քրիստոս եւ ոչ ալ Անոր Առա- քելները հաստատեցին կամ պատուիրեցին զատ- կական Տօնը, ինչպէս որ եկեղեցական պատմարան Սոկրատ ալ կը վկայէ:

Ուստի անտեղի պիտի չըլլայ կարծեմ այս ժամուս, մինչ ամենքինս ալ կը պատրաստուինք մեծ ուրախութեամբ կատարել Չատիկը, համա- ոտիւ խուզարկել ծագումը եւ հիւր այս տօնա- խմբութեան:

Չատիկն քրիստոնէութեան յատուկ հաստա- տութիւն մը չէ: Անոր գոյութիւնը կը պահանջէ Հին կտակարանին մէջ Քրիստոսէ շատ դարեր առաջ: Եբրայեցիքն Բիսալս որ կը նշանակէ անց, այն տօնին անունն էր որ հաստատուեցաւ ի յիշատակ Իսրայէլի «Ճլք ին Եգիպտոսի երկրէն: Այս անունը նաեւ կը տրուէր այն պահն զոր պիտի մտնէին Իսրայէլացիք Եգիպտոսէ ելից նա- խընթաց գիշերը եւ անոր արիւնէն սրտէին սու- ներուն երկու կողմի դրանտեանցը ու վերի նստին վրայ, որպէսզի երբ սատակիչ հրեշտակը անկէ անցնէր Եգիպտոսեոց անդրանիկները զարնելու համար, այն տօները չ'մտնէր վրայի նշանները տեսնելով: Այս էր Չատկական Գառը:

Քրիստոս կատարեց Չատիկն իր խաչելու- թեան նախընթաց երեկոյնի, եւ այս առթիւ մեծ բարեփոխում մը մտցուց այս սովորութեան մէջ: Քրիստոս իր անձին հետ նոյնացուց զատկական Գառը եւ փոխանակ զատիկն տէրութեան ընթ- ըրքը հաստատեց: Այսպէս ցոյց տուաւ Քրիստոս թէ ինքն էր ճշմարիտ եւ էական նախատիպն զատկական դասին և թէ Եգիպտոսէ ազատու- թիւնն լոկ օրինակ կամ տիպն էր մեծ իրկութեան զոր ինք աշխարհ ընրաւ:

Այսպէս նախին քրիստոնէաները մեծաւ մա- սամբ հրեաներէն սերած եւ անոնց հետ սերտ յա- րաբերութեան մէջ ըլլալով, բնականաբար շարու- նակեցին պահել հին երէական տօները նոր իմաս- տով եւ հոգիով ի յիշատակ այն դէպքերուն որոնց ստուերներն էին անոնք: Բիսալսի տօնը քրիստո- նէական խորհուրդներ զգեցաւ եւ ամեն տարի

Համարիս գատիական Գառնի մահուան տարեգար-
ձին սկսաւ հոշակուիլ Յարութեան Զատիկ ան-
ուամբ :

Բայց այս տխուր յիշատակութիւն մըն էր :
Փրկչին մահը անոր կենաց սուգակէտն էր, եւ
ուստի եկեղեցին ասոր վրայ աւելցուց Յարու-
թեան վեհագոյն գաղափարը : Մարգիկ բնական
հակամարտութիւն մ'ունին պարտութիւնը մոռա-
ցութեան մասնելու եւ յաղթութիւնն առ յաւէտ
յիշատակելու : Քրիստոսի մահը եւ թաղումը առ
կրեւոյթն պարտութիւն կը թուէր եւ ուստի
տակաւ առ տակաւ աներեւութանալով, զատկա-
կան տօնը Յարութեան ցնծալից յիշատակութեան
փոխուեցաւ եւ քրիստոնեայք սկսան զիրար ող-
ջունել յաղթական ազգարարութեամբ «Քրիստոս
յարեաւ ի մեռելոց » :

Մ. Յ. ԳՆԱՃՅԱՆ

ԵՐԿՈՒ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Կը տեղեկանանք թէ՛ Պ. Թ. Ֆասուլ-
եանեան, որ բարեգործական նպատակնե-
րու համար բաւական արդիւնաւոր կերպով
երկու ներկայացումներ սուաւ, որոշած է,
առաջիկայ շաբթու Օրէրա Խափեայի մէջ
իրեն ի նպատակ ներկայացնել, ԽԵԼԱՅՄԻՐ
ԿԻՆԸ :

Տիրա Ֆասուլեանեան, արգէն ծանօթ
թատերասէր հասարակութեան, կը յաւանք
թէ պէտք էր զած քաղաքութիւնը կը գտնէ :

— Նոյն շաբթուան մէջ, Տիկին Մարի
Ե. Պէնչեան, որուն ի նպատակ արուելիք ներ-
կայացման մասին արգէն այս էջերուն մէջ
գրած էինք, ինչ ինչ բանաւոր պատճառ-
ներով յետաձգուած էր, Ապրիլ 29ի կիրա-
կի գիշերը, Եգիպտական նոր թատրոնին
մէջ պիտի ներկայացնէ՝ ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ,
ՍԷՐ :

Մեր թատերաբեմի այս երկու կարեւոր
աշխատաւորներուն ալ համար կատարեալ
յաջողութիւն կը ցանկանք :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ԱՆԳԼԻՈՅ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ — Օպանիոյ
մէջ հասարակաց կարծիքը շատ կը յուզուի
Պէյրաի վրայ Անգլիոյ բրած վերջին փոր-
ձերուն համար :

Մատրիտի հասարակապետական թեր-
թերը վախ կը յայտնեն եւ մնատանջութեան
մէջ են, Օպանիական բոլոր ամբողջեանց
լքեալ վիճակին համար :

« Էլ Բաիս », ի մէջ այլոց, ակնարկու-
թիւն կընէ Ֆրանսայի եւ Անգլիոյի մէջ տեղի
ունենալիք պատերազմի մի կարելիութեան,
եւ կը հաւատայ թէ՛ Օպանիա դարձեալ
1808ի անցքերուն կրկնութիւնը պիտի
տեսնէ, ինչպէս Նաբոլէոն Օպանիացիներէն
պահանջեց իրեն ազատ անցք տալու, իրենց
երկրէն Բորթուկալի մէջ գտնուած Անգլիա-
կան բանակին վրայ յարձակելու, այնպէս
ալ այսօր Անգլիան Օպանիայէն պիտի
խնդրէ իր երկրէն անցնելու Պերինեանց
կողմէն Ֆրանսան զարնելու համար :

Եւ « Էլ Բաիս » կը յաւելու թէ՛ մեզի
անկարելի պիտի ըլլայ այդպէս հզոր նա-
ւատորմիչ ունեցող ազգի մը ուժգին յա-
ւակնատութեանց ընդգիմանալու :

Անգլիական նաւերուն յաճախակի
Գանարեան կղզիները բրած յաճախում-
ներէն եւ կղզեխումբին շուրերուն մէջ խո-
րաչափական փորձերուն հետեանքով, Գա-
նարեանց ընդհանուր կառավարիչ Պ. Պար-
կէս, իր պարտականութիւնը համարած է
կառավարութեան ուշադրութիւնը հրաւի-
րել ասոր վրայ եւ օգնազօրք ուղել : Կա-
ռավարութիւնը ասոր վրայ պէտք եղած
ուշադրութիւնը դարձուցած չըլլալուն —
թէեւ քիչ մի օգնազօրք զրկուելու հրա-
մանը է տրուած — կառավարիչը բաւական
չսեպելով, խնդրած է որ իր հրաժարա-
կանը ընդունին :

ՌՈՒՍԻՈՅ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄՆԵՐԸ — «Սթան-
տարտ » ի նայելով, 500,000 Ռուս Կովկասի
եւ Աֆղանիստանի սահմանագրութիւն միջև
կեդրոնացած են : « Սէնթրալ Նիւս » կը
ծանուցանէ թէ՛ Ռուսիա Միացեալ Նա-
հանգներէն անուխի շատ կարեւոր գնումներ
կընէ :

Զօրավար Բուրբաթքին, Ռուսիոյ պա-
տերազմական նախարարը, առաջիկայ ամիս
կովկաս պիտի երթայ զօրաբանակները
քննելու թիֆլիս՝ ընդհանրապէս կը կարծեն
թէ նախարարը դէպ ի կեդրոնական Ասիա
պիտի երթայ եւ Աֆղանիստանի սահմանա-
գրութի պահակազուգեքը աչքէ պիտի
անցնէ Բուրբաթքին ալ մէկտեղ առնելով, ուր
հիմա մեծ զօրախումբ մը կեդրոնացած է :

Մայիսի վերջերը ծովակալ Թիրթօֆ,
ծովային նախարարը, Օտէսայի օժանդակ
նաւատորմին յաճախակներէն մէկովը
ծայրագոյն Արեւելք պիտի երթայ, ուր պիտի
քննէ մանրակրկիտ կերպով Բորթ-Արթիւրի,
Տալիսի եւ Վլադիմիրովոքի ամբողջութիւնները :

Օժանդակ նաւատորմին վերջին յա-
ժաւորակը որ Օտէսայէն Բորթ-Արթիւր մեկ-
նած է, կը փոխադրէր 1700 զինուորական,
մեծաքանակ ռազմավթերք եւ պատերազ-
մական պիտույք :

182րդ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՔՐԷՏԻ ՖՕՆՍԻԷ ԷԺԻԲՍԻԷՆԻ

17 Ապրիլ 1900

Ա. պարգև՝ ֆրանք 100,000. Թիւ 292,674

Հետեւեալը 1000ական ֆրանք կը շահին

144,282	163,370	214,497	181,473
25,856	126,843	180,790	173,304
293,356	171,582	322,318	153,579
318,566	253,840	307,267	168,344
286,457	33,128	80,561	217,859
328,553	196,357	245,634	107,531
	161,688		

ԿԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՌԻՐԱԹ 20 ԱՊՐԻԼ 1900

2697	6681	7790	6324	7184	7040
2012	8073	6893	276	9315	661
9353	2944	8549	7294	9745	4410
8037	7324	9437	6994	5899	3278
	4381	7060	3447		

Հ Ե Ռ Ա Ք Ի Ր

ԵԱԳՕՀԱՄԱ 12 Ապրիլ. — Սէուլէն առ-
նուած լուրերուն նայելով, Ռուսիա Մա-
լաբոյի խնդրոյն առթիւ Կորէաի նոր պա-
հանջ մը ներկայացուցած է :

ԼՈՅՏՐԱ 14 Ապրիլ. — «Թայպը » Օ-
հաննէսպուրիէն երէկուան թուով կը տե-
ղեկանայ թէ՛ թշնամին հազարաւոր մար-
դերով, ութը թնդանօթով, երկու (բօմբ)
թնդանօթով եւ երկու մաքսիմով ճալճէրը
կը պաշարէ :

ՊԼԵՕՄՖՅՈՆԹԱՅՆ 15 Ապրիլ. — Լորտ
Ռօպըրթս հեռագրեց Քրիւկէր նախագա-
հին, Բրէթորիայի գաղթային գերինե-
րուն տրուած գէշ խնամքին համար. ասոնց
հետ յանցապարտներու նման կը վարուին
եղեր :

Լորտ Ռօպըրթս միշտ կը կարողանայ
իր ուժերը կեդրոնացնել այն կէտին վրայ՝
ուր կարեւոր թուով թշնամուոյն ուժը կը
գտնուի :

ԱՂԷՔՕԱՆԻՐԻԱ 16 Ապրիլ. — Եամ-
պոյի մէջ ժամտախտի շորս մահեր պատա-
հած են : Քարանթինայի վարչութիւնը վա-
ղը պիտի գումարուի պէտք եղած միջոց-
ները ձեռք առնելու համար. հաւանական
է թէ աւտավայրի առողջական վիճակին
վրայ կասկածները աւելնան :

ԼՈՆՏՐԱ 17 Ապրիլ. — «Սթանտարտ»
Պէթօֆօնթայնէն կ'իմանայ թէ՛ Վէբընէրը
պաշարող զօրագունքերը կատարեալ նա-
հանջի մէջ են : «Տէյլի Թէլէկրաֆ» կ'աւել-
ցրնէ թէ՛ Պուրկէրներու մեծամասնութիւնը
գէպի հիւսիս քաշուած է, բայց միշտ զրոյց
կը չըջի թէ 6,000 հազի Պէթհուրի կը մե-
տենան : Ըստ «Թայպը »-ի, Վէբընէրա Պօէր-
ները գէպի հարաւ կը յառաջանան :

Մէքքինկէն ամսոյս 6 թուականաւ կ'ի-
մացուի թէ՛ զօրավար Միման ռաբակոժու-
թիւնը վերսկսած է :

ԼՈՆՏՐԱ 17 Ապրիլ. — Լրագիրները
կը հաղորդեն թէ՛ Վէբընէրի մէջ զօրավար
Պրապան յաղթած է Պօէրներուն, բայց այս
լուրը պաշտօնապէս չը հաստատուիր :

ԼՈՆՏՐԱ 19 Ապրիլ. — Պէթօֆօնթայնի
հիւանդանոցներուն մէջ երկու հազար եւ
կէյտիսմիթնի մէջ տասն եւ հինգ հազար
անգլիացիներ կը հաշուուին :

Պօէրները Սընդէյս Ռիվըրի եւ Տունսի
բարձանց վրայ ծանր հարուածներ կրած են :

ԼՈՆՏՐԱ 20 Ապրիլ. — Պօէր պատուի-
բակներ Լահէյ կ'սպասեն, անոնք ընդուն-
ուած են Հօլանտայի թագուհւոյն կողմէ,
բայց յայտնի է թէ՛ իրենց պատուիրակու-
թիւնը անօգուտ պիտի ըլլայ եւ ոչ մէկ
տէրութիւն պիտի միջամտէ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ԵՂԱՅՐԱՍՊԱՆԸ. — Ամսոյս 16ի առա-
ւօտեան ժամը 11ին Պ. Աղբէրիս, Յունական
հիւպատոսարանի առաջին թարգմանը, Ա-
ղբէրանդրիոյ Վսեմ. կառավարչին քով
գնացած է, նաւարանին բանտէն եղբայ-
րասպանը Յունական հիւպատոսարանը փո-

խաղաղութիւն պահուն, փողոցներուն մէջ բազմութիւն չիւնուելու գէտ ձեռք առնուելու միջոցներուն վրայ համաձայնելու համար:

Օրինական ամեն տրամադրութիւն կարգադրուած ըլլալով, փան Տէմնձանթօ միայն զինուորի մը ընկերակցութեամբ կառք մը գրուած է: Կէս օրէ յետոյ փամը Չին երբ դատապարտեալը Յունական հիւպատոսարան հասած է, հոն մեծ բազմութիւն մը կ'սպասէր:

Այնքանիս Անգղիական զօրանոցը հանող փողոցը, մարդիկ, կանայք և սղայք կը սպասեն մարդասպանի՞ր գալուտեանը, ամենքն ալ հետաքրքիր էին եղբոր սպաննիչը տեսնելու:

Փան, Յունական հիւպատոսարանի հարցաքննիչ դատաւոր Պ. Բարատորուօի սրահը առաջնորդուած, գոնիւրը գոցուած և հարցաքննութիւնը սկսած է:

Հարցաքննութիւնը գալանի ըլլալով ընկանաբար հաշիւը չենք կրնար տալ, կ'ըսէ «Փար»:

Բայց սակայն գիտնալ կը կարծենք ընդհանուր կերպով, թէ մարդասպանին յայտարարութիւնները զգալի տարբերութիւն մը կրած չեն, իր առջի հարցաքննութեան ատեն ըսածներէն:

Թէպէտե ճշտօրէն չգիտցուիր տակաւին, սակայն մէկ քանի անդադունապահութիւններէ կ'իմանանք թէ ամբաստանիւք այժմ կը շնայ ապացուցանել թէ՛ իր ուճիւրը կանխամտածութեան արդիւնք չէր, այլ իր եղբայրը իր տունը հրահրած օրը վիճարանութիւն մը սկսած է, գրեթէ անմիջապէս, երկու եղբայր մէջ:

Փան հաստատել ուզած է, թէ իր երէց եղբայրը ամենէն առաջ իր ձեռքը խածած է, և ինք անկէ պատճառուած ցտին տպաւորութեանը տակ, դանակը ձեռք առած, պատեանէն հանած և ուզած է եղբայրը այտէն զարնել, բայց դանակը սոււած և Բարատորի կողորդը մտած է:

Տիկին Օկիւսթին ուզած է օգնութիւն աղաղակել, բայց ամուսինը սպառնացած և լռեցուցած է զայն:

Այս եղած է փանին տուած վերջնական տեղեկութիւնները:

Նոյն երեկոյին փամը Յ ու կէսին Պ. Բարատորուօ հրաման տուած է եղբարասպանը նաւարանի բանտը փոխադրել:

Հարցաքննութեան միջոցին բանտակառքը հիւպատոսարանին դրան առջև կեցած է, հակառակ ասոր կարգը և հանգարտութիւնը խանգարած չէ և ոչ իսկ վայր-

կեան մը, նոյն իսկ մարդասպանին կառք մտած փամնէն սկ:

Ապրիլ 17ի առաւօտուն փամը Յին, փան Կարձեայ հարցաքննիչ դատաւորին առջև կ'ըսէ:

Պ. Կարատորուօ նոյն օրը գրած է քաղաքապետութեան թէ՛ արդեօք Տիկին Օկիւսթին հրահր վիճակը կը ներէ՞ հարցաքննութեան մը յոգնութիւնները կրելու:

ՃԾՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Պ. ՎԱԼՏԵՄԱՐԻ ԴԷՊՔԻՆ ՎՐԱՅ (Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Մինչև առտուան փամը Յ Պ. Վալտեմարը հանդարտ ձգեցինք, ապա երբ ըտլը գացի, գտայ որ ճիշդ Տր. Փ.ին մեկնած պահուն ինչպէս որ ձբած էի այնպէս էր, բազկերակը անգգալի, շունը հաղիւ հայելին վրայ զգալի, արտեւանունքները բնականապէս գոց, անդամները կարծր եւ մարմարիոնի պէս ցուրտ: Կէս ճիգ մը փորձեցի ենթակային աջ թեւը անկողինէն վեր իմինիս գծած ուղղութեանը հետեւեցնելու: Ի մեծ զարմացումս մտնողին թեւը իմ բազուկիս առած ամէն ուղղութիւնները ուրուազեց թէպէտե սկարօրէն. — արդեօք մը որ Պ. Վալտեմարի առողջութեանը շատ քիչ անգամ ստացած էի—

— Պ. Վալտեմար, ըսի իրեն կը քնանա՞ք: Պատասխանի տեղ չբռնուի սարսուռ մը. երկու երեք անգամ կրկնեցի, մարմինը թեթեւօրէն զողջեց, արտեւանունքները վերսահեցան, բաց ձգելով ակնագունդէն ճերմակ գիծ մը, չրթութեանը գրեթէ անհասկնալի մրմնջումներու պէս սա խօսքերը թափթփեցան «Ո՛հ հիմա կը քնանա՞մ, զիս մ'արթնցնէ՞ք, թողէ՞ք որ այսպէս մտնիմ»:

Թեւը միշտ կարծր, միւս անդամներուն պէս, իմինիս ուղղութեանը կը հնազանդէր, հարցումներս շարունակեցի «Կործող կը ցաւի՞ Պ. Վալտեմար»: Պատասխանը որոշ եւ չեշտուած ելաւ. «Ցաւ. ո՛չ... կը մտնիմ...»:

Հրամարեցայ զինքը աւելի շարժարկէ եւ այսպէս մինչև արշալոյս սպասեցինք: Տր. Փ. կեպաւ, ափ ի բերան մնաց մահամերձը դու կենդանի տեսնելով. բազկերակը զննեց, չրթութեանը վրայ հայելի մը դրաւ եւ ըսաւ ինձի որ քնաշղթիւր հարցափորձեմ:

— Վալտեմար, հարցուցի իրեն, միշտ կը քնանա՞ք. քնաշղթիւր խօսելու համար ճիգ մը ընել երեւցաւ. հարցումս կրկնեցի, չորրորդ անգամին շատ տկարօրէն ըսաւ.

— «Այո՛, միշտ... կը քնանամ... կը մեռնիմ...»:

Բժիշկներն ալ կարծիք յայտնեցին թէ Տ վայրկեանէն մահը յատկ պիտի գար, ու փափաք յայտնեցին որ Պ. Վալտեմար մինչև այդ վայրկեանը առանց խոռվելու այդ հանդարտ դիրքին մէջ պահուի: Հսկողակ իրենց կարծիքին փորձեցի անգամ մըն ալ հետը խօսել և իմ վերջին հարցումս կրկնեցի. վայկենական փոփոխութիւն մը մահամերձին զիմազեկը տակնուվրայ ըրաւ.

ակնակապիճներուն մէջ աչքերը տեսանելիօրէն դարձան յամրաբար վեր վերցուած արտեւանունքներովը, դէմքը դիակնային գոյն մը առաւ, մորթը մաքաղաթի կամ աւելի ճիւղը ճերմակ թուղթի գոյն առաւ, այտերու վրայի ջերմի բիծերը որ մինչև այն ամենի կենդանի էին՝ մարեցան յանկարծօրէն փչուած բոցի մը արագութեամբ. վերին չրթութեանը բաց ձգեց քիչ մը առաջ գոցուած ակնաները, ստորին կզակը ցնցումով մը ինկաւ չոր ձայն մը հանելով, բերանը խոշոր մը բաց մնաց ցոյց տալով սեւ ստուած լեզու մը: Որչափ որ ընտանի էինք ամենքս ալ սարսափահար եւ ստուկումով լեցում եւ ծաշուեցանք, ի տես Պ. Վալտեմարի ամէն յղացումէ, զորս եղող ժանտասեւաթիւ դէմքին:

Հիմա պատմութեանս նոյն կէտին պիտի հասնինք ուր ընթերցողը վարացած պիտի մերժէ հաւատք ընծայել անոր՝ բայց պարտականութիւնը կ'ստիպէ զիս պատմութիւնս շարունակելու:

Պ. Վալտեմարի վրայ հաղիւ կը նշմարուէր տակաւին կենդանութեան փորձիկ տկար նշոյլ մը, մենք կարծեցինք թէ ա՛լ մեռած է եւ զայն հիւանդապահներու խնամքին յանձնեցինք. բայց յանկարծ լեզուն վայրկեանի մը չափ երերաց, շատ յայտնի թոթոցող շարժումով մը, ապա անշարժ ձգուած կզակներուն մէջէն ձայն մը դուրս ցայտեց. խենդութիւն պիտի ըլլար այդ ձայնին նկարագրել փորձելը, բայց ես պիտի ջանամ վեր ի վերոյ նկարագրութիւն մը տալ. խիստ պատուտած, քարայրային ձայն մը կրնայ ըսուիլ այս ծանր անորոշելի ձայնին որ երբէք անշուշտ մարդկային անկանջի զարկած չէ. ինչպէ՞ս այս արտակարգ ստորերկրեայ ձայնին՝ գաղափարը տալ լսողութեան հասնել կերեւար շատ մեծ հեռաւորութենէ մը, ստորերկրեայ անդունդէ մը. այս սպաւորութիւնը զգացի — Ո՛հ, ինչպէ՞ս անբացարկին հասկցնել... — Սոսնձային նիւթերոջ պէս ուր ձեռքը կը ստողի:

Ձայնը որոշ վանկաւորումով էր, անակի, ստակալի կերպով որոշ, Պ. Վալտեմար կը խօսէր. քանի մը վայրկեան առաջ ըրած հարցումիս հիմա կը պատասխանէր, անշուշտ ընթերցողները կը յիշեն թէ՛ երբ հարցուցեր էի թէ միշտ կը քնանա՞ք, ձայնը պատասխանեց:

— «Այո՛, ո՛չ, բնացայ, հիմա մեռած եմ: Եւ ոչ մէկերինս ջանացինք ուրանալու եւ կամ զսպելու աննկարագրելի սոսկումը, մեր մէջ այս ձայնին յատկ բերած սարսուռը, ուսանողը մարեցաւ, հիւանդապահները զեւանար փախան եւ երբէք չկրցինք զիրենք համոզել զարձեայ եւ բերելու համար, աւելորդ կը համարիմ իմ զգացածս ըսելու:

Առանց բառ մը ըսելու ես եւ Տօթթօնները զբաղեցանք ուսանողին խելքը զուխը բերելու, ասիկայ ժամու մը չափ տեւեց, անկէց ետքը մեռեալին վրայ մեր զիտողութիւնները սկսանք: Հայելին վրայ շունչի հետք մը չէր կրնար, թեւէն արիւն առինք, անօգուտ, անդամները բացարձակապէս չհետեւեցան իմ ձեռքիս ուղղութեանը միայն լեզուն կը պահէր իր յատկանշական թրութեամբը: Հարցումներէն յետոյ այդ շարժումը սկսաւ շատաւ շեշտելով մտքիտական մղումին հնազանդելու կամեցողութեան ճիգ մը, սակայն անկարող էր պատասխանը յայտնի ըսելու: Ան ատեն մարմինը հաղորդակցութեան մէջ գրի երկու

ԼԱ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՃԽԱՐՀԻ ԱՍԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՍԱԳԼՈՒԽ Ի ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեաններուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրեաններուն արդէն վճարած է կամ ի նպաստ մզնեց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է: Մ. ԼԵՌՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործաւնութիւններ և հրաշարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ: ԱԼԵԿՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. Վալտեմարի հետ

բժիշկներուն եւ ուսանողին հետ, բայց իրենց ըրած հարցումները անպատասխանի մնացին :

Այլիչ հիւանդապահներ ճարեցինք եւ ժամը 1)ին երկուք բժիշկներուն եւ ուսանողին հետ գուրու ելանք Ծորեկէն լետոյ վերադարձանք. մեռնողին վիճակը միեւնոյնն էր Բունը զազրեցնելու պատեհութեան վրայ վիճարանեցանք, բայց ամենուս ալ միաձայն կարծիքը սա եղաւ որ անօգուտ պիտի ըլլար զարթուելը Թայտնապէս ըստ — ինչ որ կը հասկնանք այս բառով — արգիլուած էր իր ընթացքը շարունակելու. մագնիսական գործողութեամբ հաւանականաբար զարթուի վայրկեանը վերջինը պիտի ըլլար . . .

. . . Այլ ժամանակէն սկեայ մինչեւ անցեալ ուրբաթ օր — շարունակ ամբողջ ԵՍԹԸ ԱՄԻՄ — Գ. Վալտէմարի տունը հաւաքուեցանք շատ մը բժիշկներու եւ գիտուններու հետ: Այլ եօթը ամսուան ընթացքին մէջ քնարջիկը ճշգրէն ըսուած վիճակին մէջ մնաց հիւանդապահները անդադրուի հսկողութեան տակ վերջապէս ուրբաթ զարթուելը հրաշքիցիք, ահա այս փորձն է որուն գէշ հասկցուած արդիւնքը ժողովրդեան գիւրահաւանութենէն ծնած անասնաբանութեան արտաճառ սուաւ:

Առաջին ձեռնածութիւններն անարդիւնք մընացին, վերջապէս կեանքի վերադարձին նշանը եղաւ ծիածանին խոնարհումը. յայտարար նշան մագնիսական շարժակեցողութեան վերջը ծագուցանող:

Այս ակնագրերուն շարժումը հեռու եցաւ ատատ զեղնորակ հեղուկի մը հոսումով չր. կոպրուուն տակէն վազեց անտանելի, կծու հոտ մը հանելով: Զանազի թեւը ներգործել, արդիւնք մը յատալ չ'եկաւ. Տր. Փ. Թելադրեց զիս եկեղեցական հարցափորձել, հետեւեալ բառերը արտասանեցի:

— Գ. Վալտէմար, կրնա՞ք ըսել մեզի հիմա, ձեր զգացումները եւ փափաքները:

Ձերմի բիծերը նորէն այսի խնձորներուն վրայ վառեցան, լեզուն դողաց, ապա սպասուութեամբ գլպի մէջ դարցաւ, բայց չըթուեցները եւ կզակները անշարժ մնացին. կտոր մը սպասուե՛լ ետքը ձայնը, սառսառալուցիչ ձայնը արտաձուլեցաւ:

— « Աստուծոյ սիրուն, շո՛ւտ, շո՛ւտ քնացուցէ՛ք զիս, կամ արթնցուցէ՛ք, շո՛ւտ ձեզի կըսեմ թէ մեռած եմ »:

Չղային ոյժս սպառած, վայրկեանի մը չափ վարանած մնացի, տարտամ ձիգեր ընելով հանդարտեցնելու համար: Կամքիս բովանդակ հանգստութիւնը բոլոր կարողութիւնս վերցուց, որոշեցի արթնցնել զայն: Ամենինս ալ մագնիսական քուներն վերջը կապասէինք, բայց սպասուածը ոչ մէկ մարդկային արարած կրնար նախատեսել, որովհետեւ կարելիութենէ հետո էր:

Արագօրէն զարթուի միջոցով ձեռնածութիւնները գործադրեցի, լեզուին վրայ « մեռած, մեռած » ազդակները կը պայթէին, բառական իմաստով առանց շրթունքներէն անցնելու: Մարմինը մէկէն ի մէկ վայրկեանէ մը պակաս միջոցի մէջ կ'ընցաւ փշրուեցաւ, նեխեցաւ եւ անկողնոյն մէջ ամեն վկանեթո՛ւ աչքին առջեւ մնաց կեանահեղուկ զազրի զանգուած մը, գարշելի փտութիւն մը:

ԷՏԿԱՐ ԲՕԷ
Թարգմանեց
ԼԵՒՈՆ

ԳՈՐԾ ՓՆՏՈՂՆԵՐՈՒՆ

Պարապ մի՛ պտըտիք. եթէ պզտիկ դրամագլուխ մը սենիք, ամսական առ նըւազն տասը ոսկի շահ կայ, բաւական է որ գործերնիւք լաւ վարել գիտնաք:

Քաղաքիս մէջ ամենէն շատ բանուկ գործն է, որ կ'առաջարկուի ձեզ:

Միտու սրճարան մը կայ, յարմարաւոր տեղ մը:

Ստակ վատկիլ չէ՞ք ուզեր պատուաւոր միջոցներով. շաղակրասներուն սուրճ մը հրամայելու ազնուութիւնն ունեցէ՛ք, որ միւնոյն ժամանակ խոնարհութիւն ալ է:

Այս սրճարանն գնելու համար պէտք է գիմե՛լ նախ՝ Արշալոյսի տնօրինութեան:

Ա. Պ Ա Ր Տ Ա Ք

ԳԱՀԻՐԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ՀԱՍՊՈՒԻԿԻ, ՊՐՈՆՍՎԵԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ
ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԵԱՆՑ

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ երկար տարինը վերոյիշեալ վիճակահանութեանց տոմսերու առեւտուրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարունակելէ եւ կատարեալ փորձառութիւն ստանալէ վերջ, այս անգամ վերոյիշեալ տոմսերէն մեծ քանակութեամբ ապսպրանք տուած է եւ յետ այսու մինչեւ ցարդ ծախուածներէն աւելի զեղջեալ գներով պիտի վաճառէ:

Իրեն զիմող գնորդները կատարելապէս գոհացնելու եւ մինչեւ ցարդ այս առեւտուրին շուրջը տեղի ունեցած դժգոհութիւնները բառնալու համար մեծ հոգածութիւն պիտի ունենայ: Եւ անոնք որ Ա. Գլաւի տոմսերը ունին իրենց քով, մինչեւ վերջին Գլաւը խրքերովը հանգրծի իրենց պիտի զրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեդրոնատեղին է Մուսքիի մէջ Գ. ԳՕՆՕ-ՄՕՅԻ Պանքան:

Սոյն տոմսերէն պիտի ծախուին նաեւ ի Մուսքի, Տիար Գ. Պալըզեանի խանութի:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տոմսերու գինները:

Համպուրիկ՝ 7 Գլաւ. իւրաքանչիւրը 13 1)2էն. — ամբողջ 94 1)2:

Պրոնսվիկ՝ 6 Գլաւ. իւրաքանչիւրը 16 զրուշէն. — ամբողջ 96:

Հունգարական՝ 6 Գլաւ. իւրաքանչիւրը 17 զրուշէն. — ամբողջ 102:

ՄԱՆՕԹ. — Հունգարական տոմսերու Ա. Գլաւի թիւերը արդէն հասած են եւ հրապարակ ելած:

7—8

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄՐ

Մինչեւ ցարդ սովորութիւն չէ եղած կամ քիչ պատահած է, որ հայ թիրթիրու վարչութիւններն մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Սակայ կը պատահի որ այս փնջ կամ այն ինչ թիւը կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ եւ գրեթէ զտնել անկարելի կըլլայ:

Մենք «Արշալոյս»-ի հրձարակիման առաջին օրէն մեր սպասումին քանակը ի նկատի ունենալով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքած ծոյր համար աւելի տպագրել տուած եւ առաջին վեցամսեայն կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Արշալոյս»-ի առաջին վեցամսեայն կազմուած ունենալ, կրնան զիմող թիւերի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ:

Հաթակազմին համար 10 ֆրանքի գումար մը զրկելով մեզ:

Գարձեալ արտասահմանի ո՛ր եւ է թերթի բաժանորդ գրուի փափաքողներէն անոնք որ զիւրութիւնը չունին անոնց խմբագրութեանց հետ յարաբերութեան մտնելու, կրնան մեզի զիմող:

ՏՕՐԹԻՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առամարտ
Ապրիլ Ետե Բուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ազրանքներով կեղծ սկուաներ:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ախուսի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօսով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ախուաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ճրի գարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 4—5:

ՏՕՐԹ Ա. Յ. ՔԵՐԵՍԹԷՆԱՆ

Ի Ետիա Գլօթ-Պէլ, քիւ 20

Իր ՉՐԻ խորհրդակցութիւնները ասկէց վերջը, միայն ուրբաթ օրերը կէս օրէ առաջ ժամը (ըս ե.) 9էն 11 որոշած ըլլալով՝ կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմե՛լ ուղիղ աղքատ հիւանդներու:

5—8

ՏԻՐԱՆ ՀԻՒՄՆԻԳԵԱՆ

Շաբէ Մօհամէս Ալի Վիզրօրիա ղեգարանին փոյ:

Իրեն զիմող յաճախորդաց, սովուն ապրանքներով եւ նորաձեւութեան համաձայն, ձեւաւոր հագուստներ պատրաստել կը խոստանայ խիստ չափաւոր գներով:

Փորձի համար անգամ մը միայն հոն զիմողը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի եւ ճաշակաւոր ու ձեւաւոր զգեստ ունենալու համար՝ գարձեալ Հիւմիւզեանը պիտի փնտռէ:

2—8

ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՑՈՒՆ ԵՒ ՆԿԱՐԱՑՈՒՆ

Տաներկու տարինը շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արեւստին ամեն ճիւղերը լաւ ճշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պօլսոյ մէջ Ապաիւլլահ եղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էզպէիյէ Ետիա Գամմիլ Օթիլ ՇէֆէրՏՍՍԻ ճիւղ զիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրու կառուիներ ի հարկին:

Ակրանխարման բնական մեծոթեամբ:

Կենդանապիւրներ ամերիկեան մեքենայով, որոնք երբէք չեն աւրուի:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միմեաքիւր:

Իւզաներկ եւ ջրաներկ պատկերներ, եւլն:

Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուրբու, ինչպէս իւր ժամանակը:

Իրեն զիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք եւ կատարելապէս գոհ պիտի մնաք:

ԳԻՐԻ ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի եւ շրջակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Դասական, Դպրոցական, Գիտական, Գրական, Առուեսական, Բանասիրական, Վիպական եւայլն) որ հրատարակուած են եւ կը հրատարակուին Պոլսոյ, Իլմիթ, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալտեան վարժարան հայոց ի Գահիրէ: